չու է սուրբ Կոյս Մարիամին՝ Աստուածածին ըսւանում, և ոչ Յիսուսածին։

Անշնորհք Նեստորականները չեն ուզում հաւատալ, թէ Յիսուս է Աստուած և մարդ կատարեալ. ուրեմն և Յիսուսածինն է նոյն ինքն Աստուածածին։ Սուտ Աւետարանականները չեն յիշում սուրբ Աւետարանի խօսքերը՝ որ ասաց Յիսուս. «Այս են յաւիտենական կեանք, զի ծանիցեն զքեզ (Հայր) միայն ճշմարիտ Աստուած, և զոր առաքեցեր զՅիսուս Քրիստոս»։ Յօհ. ԺԷ. 3։ Չեն յիշում Գաբրիէլ Հրեշտակապետի աւետարեր խօսքերը, թէ «Հանգի որ ծնանելոցն է ի քէն (Կոյս Մարիամ) սուրբ է, և որդի Աստուծոյ կոչեսցի» են— Ղուկաս. Ա. 32։ Չեն յիշում Հօր Աստուծոյ ձայնը՝ «Դա է Որդի իմ սիրելի. դմա լուարուք»։

Դ. Բողոքում են սուտ եղբայրները, թէ՝ ինչու է հայոց եկեղեցին բարեխօսութեամբ սրբոց հաւատում փրկութիւն հոգւոց գտնել և առողջութիւն մարմնոց, են. քանզի ասեն ըստ առաքելոյն՝ «Մի է միջնորդն Աստուծոյ և մարդկան՝ մարդն Յիսուս Քրիստոս»— Ա. Տիմ. Բ. 5։ Չեն իմանում ողորմելիքը, որ Քրիստոսի միջնորդութիւնն միայն այն մեծ գործի մարդկային ազգի փրկագործութեան համար էր, որ ոչ հրեշտակք կարացին կատարել և ոչ նահապետք և մարգարէք, այլ միայն Յիսուս Քրիստոս մարդկային մարմին առնելով և խաչի վրայ զոհուելով կարողացաւ մեր փրկութիւնը հոգալ։ Թող կարդան Պօղոս Առաքելոյ խօսքերը՝ «Այլ ամենայն ինչ յԱստուծոյ՝ որ հաշտեցոյցն զմեզ ընդ իւր ի ձեռն Քրիստոսի. և *ետ մեզ զպաշտօնն հաշտութեան*»—Բ Կորն. Ե. 18։ Թող կարդան Քրիստոսի խօսքերը, որ Առաքելոյ ասէց. «Եւ դուք նստջիք յերկուսաստան աթոռ՝ դատել զերկոտասան ազգն Իսրայելի»— Մատ. ԺԹ. 28։ Շատ պարզ են այս խօսքերը։

Այս ևս յայտնի է, որ բարեխօսութիւնը կը նշանակէ աղօթք. ինչպէս մենք կենդանիքս աղօթում ենք հանգուցեալոց համար, այնպէս և հանգուցեալք՝ աղօթում են հոգւով մեզ համար։

Այս մասին վկայութիւնք շատ կան Սուրբ Գրոց մէջ։ Կարդա՛ պինուորեալ և յաղթական եկեղեցւոյ պատմութիւնը։